ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Վահրամ Դումանյան -ին

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ

Միքայել Խաչատրյան-ից -

(դիմողի անուն, ազգանուն)

Կոտայքի մարզ Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան Վազգեն Ա վեհափառի փողոց 13շենք 24 բնակարան 098-11-03-98 miqayel.xachatryan98@gmail.com

(բնակության վայր, հեռախոսի համար, էլ.փոստի հասցե)

«Բյուրեղավան համայնքի մարզամշակութային կենտրոն» բյուջետային հիմնարկ:
Գրանցման համար 42.180.02830

(կազմակերպության լրիվ անվանումը, պետ.գրանցման համարը)

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ ինձ ընդգրկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

Կից ներկայացնում եմ պահանջվող փաստաթղթերը.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT
Մուտք N Ս-79378-2021
«29» 11 2021թ.

Ամփոփ տեղեկանք՝ վերջին 2 տարում ծավալած գործունեության վերաբերյալ

2020 թվական

1.Հունվարի 28 <<Բյուրեղավանի արծիվներ>> գրքի շնորհանդեսը զոհված ազատամարտիկների հարազատների մասնակցությամբ: Ծաղկեպսակ խոնարհվեց Բյուրեղավանի հուշահամալիրում:

2.Փետրվարի 19 Հովհ. Թումանյան 151 <<Գիրք նվիրելու օր>>- Միջոցառմանը մասնակցեցին հիմնական դպրոցի 2-րդ դասարանի աշակերտները: Գրքեր նվիրեցինք երեխաներին:

3.Փետրվարի 28 Սումգայիթից բռնագաղթած և Բյուրեղավանում բնակվող մեր հայրենակիցների հետ հանդիպման կազմակերպում Մշակույթի տանը: Ներկա էին Ռոզա Ծառուկյանը, ԱԺ պատգամավորներ Իվետա Տոնոյանը և Լուիզա Սարգսյանը:

4.Փետրվար Համայնքի շախմատիստների մասնակցության ապահովում 2020 թվականի շախմատի տղամարդկանց մարզային և պատանեկան առաջնություններին: Արամայիս Ավալյանը պատանեկան առաջնությանը գրավեց 1-ին տեղը, Դիլոյան Անգելինան 3-րդ տեղը: Ա. Ավալյանը իրավունք ստացավ մասնակցելու կիսաեզրափակիչ փուլին:

5.Օգոստոսի 16 Քաղաքի օր Բյուրեղավանում կառուցվող Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու տարածքում տեղի ունեցավ խաղողօրհնեքի արարողություն: Օրհնված խաղողը բաժանվեց հավատացյալ ժողովրդին:

6.Բյուրեղավանի N 35 շենքի բակում տեղի ունեցավ արցախյան ազատամարտում զոհված բյուրեղավանցի Միշիկ Հակոբյանի անվանական զրուցարանի բացման արարողություն: Երգ, պար, ասմունք՝ դպրոցականների մասնակցությամբ:

7.Նոր ուսումնական տարվա կապակցությամբ 160 առաջին դասարանցիների համար ձեռք բերվեց և բաժանվեց գրենական պիտույքների փաթեթներ:

8.Սեպտեմբերի 8-ին՝ ԱԻՆ-ի աշխատողի օրվա կապակցությամբ հանդիպում Կոտայքի մարզի փրկարարների հետ: Լավագույն 4 աշխատակիցներ համայնքի ղեկավարի կողմից պարգևատրվեցին պատվոգրերով և հուշանվերներով:

9.Սեպտեմբերի 27 <<Եվրոպական ժառանգության օրեր>>՝ <<Հայաստան Ֆրանսիա. անխախտ բարեկամություն>> խորագրով միջոցառում՝ մշակույթի տան, համայնքային գրադարանի և արվեստի դպրոցի հետ համատեղ:

10.Դեկտեմբերի 30 <<Երազանքների արկղը>> Ամանորի ուրախ ներկայացում Աբովյանի թատրոնի արտիստների մասնակցությամբ: Անցկացվեց երեք սեանս: 1-ից 3-րդ դասարանցի երեխաներ՝ Բյուրեղավան, Նուռնուս և Զրաբեր բնակավայրերից

2021 թվական

1. Փետրվար Շախմատի խմբակի սաները մասնակցեցին կարգային մրցաշարերի Աբովյան քաղաքում

2. Փետրվարի 9 Հայ մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանին նվիրված գրական ցերեկույթ՝ ակտիվ ընթերցողների մասնակցությամբ՝ գրադարանում

3.Փետրվարի 13 <<Տերընդեզ>> երիտասարդների հանդիպումը <<Արդվին>> ազգագրական համույթի ղեկավար Մասիս Հովհաննիսյանի հետ

4. Փետրվարի 16 <<Փառք և խոնարհում>>՝ միջոցառում նվիրված 2020 թվականի արցախյան պատերազմում զոհված տասը բյուրեղավանցիների հիշատակին

5. Փետրվարի 19 Հովհաննես Թումանյանի ծննդյան օրված նվիրված միջոցառում փոքրիկների մասնակցությամբ, <<Չարի վերջի>> բեմականացումը:

<<Գիրք նվիրելու օր>> հիմնական դպրոցի ցածր դասարանի աշակերտների այցելությունը գրադարան, Կազմակերպվեց շրջայց մշակույթի տանը:

Գրքեր նվիրեցինք ավագ դպրոցի և արհեստագործական ուսումնարանի գրադարաններին:

6.Փետրվարի 24 Թումանյանական օրերի շրջանակներում հեքիաթի ընթերցանություն, մուլտֆիլմի ցուցադրում:

7. Փետրվարի 27 Հուշ-ցերեկույթ՝ նվիրված բյուրեղավանցի բանաստեղծ, գրողների միության անդամ Հայկազ Խնկոյանին: Հրավիրված էին Հ. Խնկոյանի ընտանիքի անդամները, հարազատները, <<Առագաստ>> ակումբի անդամները, հարևանները: Միջոցառմանը ներկա էին նաև ՀԳՄ անդամ, ՀԳՄ Կոտայքի մասնաճյուղի նախագահ Հակոբ Հովհաննեսը, արվեստաբան Վարդ Արծափեն և Շահեն Փանոսյանը:

8.Մասնակցություն մարտի 6-ից 14-ը Կոտայքի մարզի շախմատի պատանեկան առաջնությանը <<Աբովյանի շախմատի դպրոցում>>: 3 հոգի՝ Արամայիս Ավալյանը, Գոհարիկ Մկրտչյանը և Անգելինա Դիլոյանը իրավունք նվաճեցին մասնակցելու Երևան քաղաքում անցկացվելիք կիսաեզրափակիչ փուլին:Մասնակիցներից 3-ը նվաճեցին որակավորման կարգեր:

9.Մարտի 15 Հայ մեծանուն բանաստեղծ Եղիշե Չարենցի ծննդյան 124-ամյակին նվիրված միջոցառում գրադարանում՝ ընթերցողների մասնակցությամբ:

10.Մարտի 21-29-ը 5 պատանի շախմատիստների մասնակցություն ՀՀ պատանի շախմատիստների կիսաեզրափակիչ խաղերին: Անգելինա Դիլոյանը նվաճեց եզրափակչի ուղեգիր: 2 մասնակից՝ Գոհարիկ Մկրտչյանը և Աննա Բեգյանը լրացրեցին 3-րդ կարգ: 2 մասնակից անհաջող ելույթներ ունեցան:

11.Ապրիլի 15 <<Քաջ Նազարը>> հեքիաթի առաջին տիկնիկային ներկայացման ցուցադրություն՝ երիտասարդների մասնակցությամբ՝ մանկապարտեզի, ավագ դպրոցի նախակրթարանի, երրորդ դասարանցիների և տարբեր խմբակների երեխաների համար:

12.Ապրիլի 16 Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվա կապակցությամբ՝ շրջայց Նուռնուսի 13-րդ դարի սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու տարածք, որտեղ երիտասարդների ուժերով մաքրվեց տարածքը, մասնակից երիտասարդները անցկացրեցին մշակութային միջոցառում՝ պատմական ակնարկ, երգ, պար: Ցուցադրվեցին օրվա խորհրդին համահունչ նկարչական աշխատանքներ: Գրադարանում կազմակերպվել էր գրքային ցուցահանդես:

13.Ապրիլի 21 <<Քաջ Նազարը>> հեքիաթի տիկնիկային երկրորդ ներկայացումը: Հրավիրել էինք Նուռնուս և Զրաբեր բնակավայրերի մոբայլ մանկապարտեզների և ցածր դասարանների աշակերտներին, Բյուրեղավան քաղաքի նախակրթարանների և հիմնական դպրոցի առաջին դասարանի աշակերտներին: Ներկայացումը դիտեց 220-240 երեխա:

14.Ապրիլի 23 Պոեզիայի ժամ՝ նվիրված Ցեղասպանության 106-րդ

տարելիցին: Թեմային համահունչ՝ կազմակերպվել էր նաև նկարների և գրքերի ցուցահանդեսներ:

15.Մայիսի 26 <<Լեոնարդո Դա Վինչի>> ճանաչողական միջոցառում գրադարանում:

16. Հունիսի 1 Երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ մանկական շոու ծրագիր Մշակույթի տան բակում

17. Հունիսի 25 Մշակույթի տան բակում բակային ճամբարի անցկացում սիրված մուլտհերոսների մասնակցությամբ: Կազմակերպվեցին ուրախ

խաղեր, երգ, պար, ասմունք, կավճանկարչության մրցույթ:

18.Հուլիսի 13 Արցախյան երկրորդ պատերազմում զոհված բյուրեղավանցի Հայկ Եղիազարյանի և մյուս քաջորդիների հիշատակին նվիրված պուրակի հուշակոթողի և խաչքարի բացման հանդիսավոր արարողության անցկացում:

19. Ամեն մեկդ' մի վառ ճրագ...Մոմավառություն երթ' ի հիշատակ մեր անմահ հերոս քաջ հայորդիների: Դուք անմա'հ եք, անմահ մի լույս' մեր սրտերում, հերո'ս Տղերք...

20.Հուլիսի 12-14-ը մասնակցություն Կոտայքի մարզի գրադարանավարների համար անցկացվող օնլայն դասընթացներին:

21.Օգոստոսի 9-ին մշակույթի տան դահլիճում ցուցադրվեց Հովհ. Թումանյանի <<Անխելք մարդը>> հեքիաթի տիկնիկային ներկայացումը: Ներկայացումը դիտեցին 200-ից ավելի նախադպրոցական և ցածր դասարանների երեխաներ:

22.Օգոստոսի 12-ին մշակույթի տան նախասրահում տեղի ունեցավ Երիտասարդության միջազգային օրվան նվիրված միջոցառում՝ համայնքի երիտասարդների մասնակցությամբ: Շնորհալի երիտասարդները հանդես եկան գեղեցիկ կատարումներով: Հինգ երիտասարդներ համայնքի ղեկավարի կողմից արժանացան պատվոգրերի: Կազմակերպվել էր նաև հյուրասիրություն:

23.- 26.09.21 «ԼՈՒՅՍԻ ՃԱՄՓՈՎ»Ջահերով երթ, մոմավառություն, ոգեկոչման կարգ' ի հիշատակ արցախյան երկրորդ պատերազմում անմահացած քաջ հայորդիների:

24.Օգոստոսի 15 Քաղաքի օր, Խաղողօրհնեքի արարողություն Բյուրեղավան համայնքի բնակիչների մասնակցությամբ: Օրհնված խաղող բաժանվեց հավատավոր ժողովրդին:

25.Սեպտեմբերի 18 Բացվեց քաղաքային պուրակը: Ներկա էին Կոտայքի մարզպետը, Կոտայքի թեմի առաջնորդը, հյուրեր: Գեղարվեստական մասը ապահովեցին Բյուրեղավանի շնորհալի երիտասարդները:

26.Սեպտեմբերի 21-ին 46 շենքի բակում բացվեց Արթուր Մարգարյանի հիշատակին նվիրված զրուցարանը: Մասնակցում էին համայնքի ղեկավարը, հարազատները, հարևաններ, բյուրեղավանցիներ:

27.Սեպտեմբերի 25-ին Անցկացվեց <<Եվրոպական ժառանգության օրեր>> ծրագրով նախատեսված միջոցառումը: Օրվա խորհրդին համահունչ կազմակերպվեց գրքերի և նկարների ցուցահանդես, ասմունք, երգ:

28. Սեպտեմբերի 25-ին Մասնակցություն Դիլիջանում անցկացված <<Մշակութային վերածնունդ>> արհեստների և արվեստների համահայկական ցուցահանդես փառատոնին: Ներկայացանք <<Տիկնիկագործություն>> անվանակարգում, ցուցադրվեցին տիկնիկագործ Ժենյա Սարգսյանի աշխատանքները: Ներկայացանք նաև երաժշտական կատարումով: Արժանացանք Պատվոգրերի: ???

29. Հոկտեմբերի 7-ին մասնակցեցինք <<Լավագույն համայնքային գրադարան>> մրցույթի արդյունքների ամփոփմանը: <<Լավագույն համայնքային գրադարան>> անվանակարգում արժանացանք պատվոգրի:

30.Հոկտեմբերի 14-ին Մշակույթի տան դահլիճում եղավ <<Դասարանցիները>> ֆիլմի ցուցադրությունը: Ֆիլմը դիտեցին 200-ից ավելի երեխաներ Բյուրեղավանից և Նուռնուսից:

31.Հոկտեմբերի 21-ին Մշակույթի տան դահլիճում կազմակերպվեց հետաքրքրաշարժ մուլտֆիլմերի, գիտաշարժ հանելուկների տեսաերիզներով ուսուցողական ցուցադրություն: Հանդիսատեսները՝ ավագ դպրոցի նախակրթարանի, Բյուրեղավանի <<Արև>> մանկապարտեզի, <<Նանեի ժպիտ>>,<< Գտնված երազ>> և <<Գիտունիկ>> մանկական կենտրոնների սաներն էին: Ցուցադրությունն անցավ մեծ հետաքրքրության և աշխույժ մթնոլորտում:

32. Ցուցադրվեց Հովհ.Թումանյանի <<Բարեկենդանը>> հեքիաթի մոտիվներով պատրաստված տիկնիկային մուլտիֆիլիկացիա:

33. Մշակույթի տան դահլիճում ուսուցողական ցուցադրություն: Հանրակրթական դպրոցի երրորդ և հինգերորդ դասարանների համար ցուցադրվեց Ղ.Աղայանի «ԱՆԱՀԻՏԸ» հեքիաթը

Հիմնավորում՝ հասարակական խորհրդում կազմակերպության ներգրավման աշխատանքների մասնակցության վերաբերյալ

Նպատակ ունեմ մշակութային, սպորտային տարատեսակ միջոցառումների, բնապահպանական, ճանաչողական արշավների, կրթական, հասարակական և բարեգործական ծրագրերի միջոցով ակտիվացնել հասարակության կյանքն ու առօրյան, բացահայտել տաղանդներին և նրանց պոտենցիալը:
Ցանկանում եմ ակտիվ մասնակցություն ունենալ պետական կառույցների կողմից իրականացվող օգնությունների բոլոր ծրագրերին, միաժամանակ սեփական ուժերով ևս մասնակցություն ունենալ կարիքավոր ընտանիքների աջակցության գործին:
«Բացահայտենք հայրենիքը» խորագրով տարբեր շրջայցեր ու արշավներ ունենալ ինչը նպաստում է հասարակության ակտիվ հանգստին, ճանաչողական ուսուցմանը :
պարբերաբար կցանկանամ իրականացնել «ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ» խորագրով սպորտմասսայական ծրագրեր, մի շարք միջոցառումներ, ցերեկույթներ, երեկոներ, տարբեր խորագրերով մշակութային ծրագրեր: Այս ամենին զուգահեռ,իմ պարտքն եմ համարում գործով սերմանել, տարածել և պահպանել ազգային մշակույթը, սպորտային կյանքը, խթանելով կրթության, գիտության կարևորագույն աշխատանքներին ստեղծելով անհատական ուսումնական կենտրոններ:

Հակիրճ վերլուծություն՝ վերջին 3 տարիների ընթացքում նախարարության գործունեության ու կրթության և գիտության, մշակույթի կամ սպորտի և երիտասարդության բնագավառներում իրականացվող քաղաքականության վերաբերյալ

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը 2018 թվականին իրականացրել է գերատեսչության և ենթակա մարմինների գործունեության կազմակերպմանն առնչվող իրավական ակտերում փոփոխություններ Իրականացվել են «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծրագիրը հաստատելու մասին» նախագծի ընդունմանն ուղղված քայլեր: Լրամշակվել է դպրոցների ֆինանսավորման բանաձևը: ՀՀ Արարատի, Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի, սեպտեմբեր ամսին Շիրակի մարզերի շուրջ 43000 աշակերտ «Կայուն դպրոցական սնունդ ազգային ծրագրի» շրջանակում ստանում են սնունդ: «Կրթության բարելավում» վարկային նոր ծրագրի շրջանակներում 2018 թվականին հիմնվել է 17 նախակրթարան՝ շուրջ 425 երեխայի ընդգրկմամբ, այդ թվում՝ Վայոց Ձոր՝ 3, Լոռի՝ 4, Գեղարքունիք՝ 1, Երևան՝ 9 նախակրթարան: 2018թ. համընդհանուր ներառական կրթությունը ներդրվել է ՀՀ Արմավիրի մարզում, հիմնվել է երկու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն՝ Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N15 և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N2 հատուկ (օժանդակ) դպրոցների վերակազմակերպման միջոցով: Բացի տարրական դասարաններից,սոցիալական աջակցություն ստացող 39 համայնքների 49 դպրոցների 1-12-րդ դասարանների բոլոր սովորողներն ապահովվել են անվճար դասագրքերով: 2018թ. ատեստավորվել է շուրջ 7000 ուսուցիչ և առաջին աստիճանի տարակարգ է շնորհվել 393 ուսուցչի, 2-րդ աստիճանի տարակարգ՝ 18 ուսուցչի: 2018թ. անցկացվել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաներ հանրակրթական 16 առարկայից, որոնց մասնակցել է շուրջ 1500 սովորող, իսկ միջազգային օլիմպիադաներին Հայաստանը թիմային մասնակցություն է ունեցել «Մաթեմատիկա», 2 «Ֆիզիկա», «Քիմիա», «Ինֆորմատիկա», «Աստղագիտություն» «Կենսաբանություն» «Աշխարհագրություն» առարկաներից՝ շահելով 11 մեդալ՝ 4 արծաթ և 7 բրոնզ: 2018 թվականի օգոստոսի 22-ին բացվել է Հայ-չինական բարեկամության դպրոցը, որտեղ կազմակերպվում է 5-ից 12-րդ դասարանների շուրջ 400 աշակերտների ուսումնառությունը: Աշխատանքներ են տարվել մանկապատանեկան սպորտի զարգացման, բակային սպորտի մասսայականացման, հաշմանդամային սպորտի զարգացման, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի և առողջ ապրելակերպին առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրման վերաբերյալ: «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի

չափորոշիչները և ծրագրերը վերանայելու նպատակով ՀՀ կրթության և գիտության և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարների համատեղ հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: Տարվա ընթացքում անցկացվել են մի շարք միջոցառումներ ուսումնամարզական միջոցառումներ, այդ թվում՝ «ՀՀ Ազգային ժողովի գավաթի» խաղարկությունը, որին մասնակցել է ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-6-րդ դասարանների 5245 դպրոցական: ՀՀ անկախության 27-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների հանրապետական 27-րդ մարզական խաղերը, որոնց մասնակցել է շուրջ 55.000 դպրոցական: Լրամշակվել է «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ նախաձեռնելով «Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին» նոր՝ միասնական օրինագծի մշակում: Միասնական օրինագծի մշակված տարբերակն փորձագիտական քննարկման փուլում է, իսկ այնուհետ նախագծի լրամշակված ամբողջական տարբերակը կներկայացվի հանրային քննարկման: Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի հավատարմագրման հաձնաժողովի որոշմամբ Գորիսի պետական համալսարանին և Եվրոպական համալսարանին շնորհվել է պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում՝ 2 տարի ժամկետով:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2019 թվականի գործունեության հիմքում եղել են ՀՀ կառավարության ծրագրով ամրագրված դրույթները, առավել թափանցիկ և բաց գործելաոճի որդեգրումը, համակարգման ենթակա ոլորտների զարգացմանը միտված գործունեությունը:

2019 թվականին նախարարության կատարած հիմնական աշխատանքներն ու բարեփոխումները կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում ընթացել են հետևյալ ուղղություններով՝

գործող օրենսդրության բարելավում, իրավական դաշտի կարգավորում, ոլորտների օպտիմալացման աշխատանքներ

սոցիալապես խոցելի խավերի համար հավասար հնարավորությունների ստեղծում և խթանում,

ոլորտների զարգացմանն ու միջազգային ինտեգրմանն ուղղված գործունեություն

տեխնոլոգիական արդիականացում և թվայնացում

մարդկային կապիտալի զարգացում (այդ թվում երիտասարդության), նորարարության խթանում

միջազգային համագործակցության խթանում և ընդլայնում

կրթության որակի բարձրացում, կրթություն-մշակույթ, կրթություն- աշխատաշուկա կապերի սերտացում

առողջ ապրելակերպի, սպորտի բարձրագույն նվաճումների, մասսայական և մանկապատանեկան սպորտի զարգացմանն ուղղված գործունեություն:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի գործունեության հիմքում եղել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության 2019 թվականի պետական բյուջեի ելքային ծրագրերի և միջոցառումների գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ կատարողական/վերլուծական հաշվետվությունը (ՀՀ կրթության և գիտության ոլորտի և վերջինիս ենթակայությամբ գործող կազմակերպությունների 2019 թվականի գործունեության ամփոփ նկարագիրը, ներառյալ՝ մակրոցուցանիշներ և եկամուտների մասին վերլուծական տեղեկատվություն), ՀՀ 2019թ. կապիտալ ծախսերի մասին հաշվետվությունը և ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն, ինչպես նաև կատարողական հաշվետվությունը մուտքագրվել է LS FINANCE էլեկտրոնային համակարգ, Կատարվել են հաշվարկներ հանրակրթական դպրոցների ֆինանսավորման բանաձևի գործակիցների դուրսբերման համար, նոր բանաձևի հիման վրա հաշվարկվել են ՀՀ բոլոր մարզպետարանների ենթակայության հանրակրթական դպրոցների ֆինանսավորման գումարները: Կազմվել են պայմանագրեր նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների առանձին ծրագրերի մասով (թվով 69 պայմանագիր): Ընդունվել են և ներկայացվել են հաստատման նախարարության ենթակա որոշ ուսումնական հաստատությունների և այլ ՊՈԱԿ-ների նախահաշիվները, տարիֆիկացիաները և հաստիքային ցուցակները, Կատարվել են համապատասխան աշխատանքներ գանձապետական հաշիվների կառավարման Client Treasury էլեկտրոնային համակարգում: Ուսումնասիրվել և վերլուծվել են կրթության, գիտության ոլորտի կազմակերպությունների ընթացիկ հաշվետվությունները, պատրաստվել են և ներկայացվել են հաստատման համապատասխան ֆինանսավորման հայտեր («Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ): Կատարվել են հաշվարկներ ՀՀ բոլոր մարզպետարանների ենթակայության հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցվող գումարների մասով՝ հաստատված կարգում փոփոխություն կատարելու համար: Կազմվել են մի շարք հրամանների նախագծեր (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունվարի 15-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով համապատասխան ծրագրերի շրջանակներում իրավաբանական անձանց սուբսիդիաների, նվիրատվությունների, նպաստների և դրամաշնորհների հատկացման գործընթացի պատասխանատու ստորաբաժանումների ցանկը հաստատելու մասին» N 12-Ա/2 հրաման, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունվարի 16-ի «Մոնիթորինգ իրականացնելու նպատակով աշխատանքային խմբեր ստեղծելու մասին» N 27-Ա հրաման, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի հունվարի 22-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի բյուջեի կատարումն ապահովող որոշ միջոցառումների իրականացման մասին» N 44-Ա/2 հրաման, ՀՀ ԿԳՄՍ նախարարի փետրվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 35-Լ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N 04-Լ հրաման (ՀՀ ԿԳՄՍ նախարարության

ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվների հաստատման կարգ), ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020 թվականի փետրվարի 21-ի «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հոկտեմբերի 1-ի N 772-Ա/2 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 220-Ա/2 հրաման (Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգ), ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի հունվարի 17-ի ««ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը հատկացված միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման գործընթացներն իրականացնելու նպատակով պատասխանատու ստորաբաժանումներ, գնումների համակարգող և գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցը հաստատելու մասին» N 01- Ա/3 հրաման, ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի փետրվարի 12-ի «2020 թվականին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից «Հանրային իրազեկում» ծրագրի շրջանակներում իրականացվող գնումների համակարգող և պատասխանատու ստորաբաժանում սահմանելու մասին» N 16-Ա/3 հրաման, ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի հունվարի 31-ի «Պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանելու մասին» N 07-Ա/3 հրաման, ՀՀ ԿԳՄՍ գլխավոր քարտուղարի տեղակալի 2020 թվականի հունվարի 22-ի «Պատասխանատու ստորաբաժանում և գնումների համակարգող սահմանելու մասին» N 03-Ա/3 հրաման), ինչպես նաև նախաձեռնվել են փոփոխություններ և լրացումներ մի շարք հրամաններում, 10. Կազմվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ որոշ կրթական և մարզական հաստատությունների շենքային պայմանների բարելավման համար ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի վերաբաշխման միջոցով քաղաքաշինության կոմիտեին գումար հատկացնելու վերաբերյալ: Բացի վերը նշված աշխատանքներից իրականացվել է նաև. - Աշխատանք Armeps և PPCM համակարգերում (վճռված արձանագրությունների ստուգում և հաստատում/մերժում, աշխատակարգային տվյալների կցում համապատասխան բաժիններին, պայմանագրերի, ԳՊ փոփոխման հայտերի ստուգում և հաստատում և այլն): - Կազմվել են մի շարք գրություններ, կատարվել մի շարք հանձնարարականներ (ՀՀ վարչապետի, ՀՀ Ազգային Ժողովի, ԱԺ առանձին պատգամավորների, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ պետական մարմինների), տրամադրվել է պահանջվող տեղեկատվություն համապատասխան մարմիններ և կազմակերպություններ, կատարվել են այլ աշխատանքներ:

Դիմող՝Մ. Խաչատրյան

29.11. 2021թ